«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում

Հաստատություն՝ Երևանի թիվ 113 մսուր-մանկապարտեզ ՀՈԱԿ

Դաստիարակ՝ Նազիկ Մուրադյան

Ղեկավար՝ Ավետիսյան Ժաննա

Երևան 2023թ.

Բովանդակություն

Ներածություն 3

Գլուխ1 Ազգային ծեսեր, տոներ 4

1.1 Բարեկենդան 6

1.2 Տեառնընդառաջ 7

1.3 Ծաղկազարդ Ծառզարդար 7

1.4 Զատիկ 8

Գլուխ2 Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում 10

Եզրակացություն 13

Գրականության ցանկ 15

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ծեսն այն միջավայրն է, որտեղ բոլորը, ազգի մշակույթը յուրացրած, ինքնադրսևորվելու, ստեղծագործելու, որոնելու, հայտնաբերելու, երևակայելու, իմացածը կիրառելու լայն հնարավորություն ունեն: Ծեսը, որպես միասնական, բազմաբնույթ, ինտեգրված գործունեություն, նպաստում է նախակրթարան, ընտանիք, համայնք արդյունավետ համագործակցությանը: Ծեսի յուրացման, կրթության, ըմբռնման հիմքը անհրաժեշտ է դնել դեռ վաղ տարիքից՝ այսինքն նախակրթարանից: Նախակրթարանում ծեսի միջոցով սանի զարգացման գործընթացն արդյունավետ է, այն իր մեջ ոչ միայն ներառում է երեխայի համար կարևոր գործունեության ձևերը, այլև իրագործվում է լավագույն ազգային նյութով: Իսկ էկոլոգիական կրթության, որի հիմքը նույնպես դրվում է նախակրթարանում, նպատակը վաղ տարիքից բնության հետ երեխայի միավորումն է, բնության հանդեպ պատասխանատու հոգատար վերաբերմունքի ձևավորումը:

Նախակրթարանում էկոլոգիական դաստիարակության նպատակն է երեխային տալ ճանաչողական, բնապահպանական տարրական գիտելիքներ, ձևավորել էկոլոգիական գիտակցությունը, բնության, շրջակա միջավայրի նկատմամբ հոգատար վերաբերմունք: Բնության մեջ ապրող երեխան ճարպիկ է, գործունյա, անվախ, ուժեղ, խելացի, սրամիտ, համարձակ և այլն, որովհետև միայն այդպիսի հատկություններ ունեցողը կարող է ոչ միայն գոյատևել այդ միջավայրում, այլև լիարժեք անդամը լինել,

Թեմայի արդիականությունը

Նախամանկապարտեզական տարիքի երեխայի զարգացման մեջ կարևոր դեր պետք է գրավի բնագիտական և էկոլոգիական դաստիարակությունը: Բնության նկատմամբ վերաբերմունքը, էկոլոգիական պատկերացումները ենթադրում են. ծանոթացնել երեխաներին բնության հետ, սովորեցնել շրջակա միջավայրի խնամքի

կարևորությունը և կանոնները, հոգատարություն սերմանել շրջակա միջավայրի՝ ծառերի, խոտերի, կենդանիների և բնության մաս կազմող յուրաքանչյուր տարրի նկատմամբ:

Գլուխ1.Ազգային ծեսեր, տոներ

Ծեսերը աչքի են ընկնում իրենց պատմական և ճանաչողական արժեքներով: Դրանք ստեղծվում են ոչ թե պատահական դեպքերի շուրջ, այլ ժողովրդի համար կենսական նշանակություն ունեցող իրադարձությունների կապակցությամբ: Ծեսերի շնորհիվ պահպանվել և սերնդե-սերունդ են փոխանցվել ազգային կյանքի բոլոր էական կողմերը ու ազգային առանձնահատկությունները: Դարերի ընթացքում հարատևած ծեսերի բովանդակությունն իր բազմակողմանի ազդեցությունն է ունեցել առօրյա կյանքի և կենցաղի վրա: Ծեսը ներառում է վարքի այն ձևերը, որոնք իրենց էությամբ նշանային են, խորհրդանշական: «Ծես» հասկացության տակ սովորաբար ենթադրվում է ստանդարտ, հաստատուն գործունեության հետևողականությունը, որն ունի արարողական բնույթ: Ծեսը լայն տարածում ունի հավատալիքներում, կրոնում, կենցաղում: Ծեսը խորհրդանշական ձևերով վերարտադրում է նաև ժողովրդի անցյալի կարևոր փուլում կատարված իրադարձությունները և դրանց միջոցով ապահովում ազգի, հասարակության միասնականությունը: Ծեսերն աչքի են ընկնում իրենց պատմական և ճանաչողական արժեքներով: Եթե մշակույթի ժառանգորդման առաջին ձևը համարենք ծեսը, ապա երկրորդը ծիսակարգն է: Այն ներառում է ավանդական գործողություններ, որոնք ուղեկցում են մարդուն կյանքի և գործունեության կարևոր պահերին: Ծեսերը անգնահատելի դեր ունեն՝ յուրովի լրացնելով ավանդույթի ընդհանուր կողմերը, որի շնորհիվ ավանդույթը դառնում է միասնական մի ամբողջություն: Դրանցում ժողովուրդը հանդես է գալիս որպե՛ս ստեղծագործ, որպե՛ս գործիչ, որպե՛ս քննադատ Ա.Կ.Գեղամյան, [Ծեսը, ծիսակարգը և սովորությունը՝ որպես մշակույթի ժառանգման և փոխանցման մեխանիզմներ]: Նախադպրոցական տարիքի երեխաների ներդաշնակ հոգևոր զարգացման կարևոր խնդիրներից մեկը ազգային

մշակույթի յուրացումն է՝ ծեսեր, տոներ, որտեղ նրանք դառնում են այս ամենը կրող և ակտիվ փոխանցող: Ազգային ծեսերը այն միջավայրն է, որը մանկան ընդհանուր զարգացման համար ստեղծում է պարարտ հող: Այն ծեսերը և տոները, որ հայ ժողովուրդը նշում էր դեռևս 100 տարի առաջ, շատ քիչ են պահպանվել մեր կենցաղում: Հայաստանի Հանրապետության առանձին մարզերում շարունակում են նշել Վարդավառը, որոշ տեղերում (մասնավորապես Գեղարքունիքի մարզ), մասամբ նշում են Համբարձումը, իսկ Զատկի, Տյառնընդառաջի, Սուրբ Խաչի որոշ ծեսեր պահպանվել են համարյա ամենուր: Ուսումնասիրողները հայ ժողովրդի տոնացույցում բացահայտում են նրա վաղնջական շերտերը, տեսնում արևի ու կրակի, ջրի ու հողի պաշտամունքին նվիրված հանդիսություններ: Իրենց ծագումով դրանց զգալի մասը գալիս են մեր ժողովրդի ձևավորման շրջանից և պատմության ընթացքում ձևափոխությունների ենթարկվելով մինչև այսօր հնարավորություն են տալիս վերլուծել և թափանցել մեր մշակույթի վաղնջական շերտերը:

Ամանորի ծեսի նախապատրաստրաստական գործընթացը տեսական ու գործնական գիտելիքների հարմոնիկ կիրառում էր, որտեղ էլ երևաց ազգային միջավայրում ծեսի, դերն ու նշանակությունը: Պատրաստեցինք ծիսական պարագաներ, խաղարկեցինք ծիսական գործողությունները, խաղացինք, որտեղ խաղն ազատ ու անկաշկանդ մթնոլորտում ինքնաբուխ գլորվում էր: Ազգային ծիսական միջավայրում սահուն լուծվում են միջանձնային հարաբերությունները: (Միջանձնային հարաբերությունները ծագում են առանձին մարդկանց միջև և ներառում դիրքորոշումների, սպասելիքների, կարծրատիպերի և կողմնորոշումների համակարգ, որոնց միջոցով մարդիկ ընկալում և գնահատում են միմյանց:. Դրանք մարդկանց միջև սուբյեկտիվորեն ապրվող փոխադարձ կապեր են, որոնք դրսևորվում են միմյանց վրա ազդեցության բնույթի և եղանակների մեջ ու հաճախ ուղեկցվում հուզական ապրումներով, արտացոլում մարդու ներքին աշխարհը:) Նախակրթարանում, բացի ծիսական ընկուզախաղերից, կատարվեցին եղանակային դիտումներ. ձևավորվեցին կոնկրետ գիտելիքներ՝ բնության եղանակային երևույթների

վերաբերյալ (ցերեկը կարճանում է, գիշերը՝ երկարում, եղանակները ցրտում են, ձյուն է տեղում), կազմակերպեցինք ձմեռող թռչունների վարքի դիտում, կերակրեցինք նրանց հացի փշրանքներով և ցորենի հատիկներով, թռչնածես խաղացինք, որի ընթացքում ամանորյա նվեր՝ ցորեն շաղ տվեցինք, որ թռչուններն ուտեն:

Բարեկենդան

Բարեկենդան նշանակում է բարի կենդանություն: Այն ուրախության ու զվարճանքի օր է, հիշեցնում է Ադամի և Եվայի դրախտային կյանքը, երբ նրանք ապրում էին վայելքի ու անհոգության մեջ:

Նախկինում դրանք հեթանոսական տոնախմբությունների օրեր էին, կատարվում էին փետրվարին կամ մարտի սկզբին: Տոնը հավանաբար կապ ուներ գարնան սկսվելու հետ: Եվ պատահական չէին զվարճությունները, որոնք արթնացող բնությանը ուրախ դիմավորելու, մարդկանց վերակենդանացնելու խորհուրդ ունեին: Մարդիկ մաղթում էին միմյանց բարի կենդանություն:

Մենք էլ մեր բարեկամ ծտերի համար որոշեցինք «Ծտի պսակ» իրականացնել՝ երեխաների ուշադրությունն ուղղելով դեպի թռչունները, որոնք ամբողջ ձմեռ մեծ դժվարությամբ ձյան տակից կեր են փնտրում: Սաները պարզեցին, որ հարկավոր է կերակրել թռչուններին՝ մեծերի հետ պատրաստելով հատուկ կերամաններ և ամեն օր դրանց վրա շաղ տալով հացի փշրանք, որոշ կերակուրների մնացորդներ, ցորեն, գարի և այլն: Պարզեցինք նաև, որ չի կարելի նրանց վնասել՝ որևէ իրով քշելով, խփելով:

Տեառնընդառաջ

Բնությունն արթնանում է, Տեառնընդառաջի կրակը «տաքացնում, արթնացնում է քնած բույսերին, ծառերին»: Ինչպե՞ս է արթնանում բնությունը, ի՞նչ նշաններ կան բուսական աշխարհում, ի՞նչ միջոցով են բազմանում բույսերը… հարցեր, որոնց պատասխանները հերթով հայտնաբերում են սաները՝ ինքնուրույն ուսումնասիրելով իրենց շրջապատող բույսերին:
Պարզեցինք, որ օրերն արդեն տաքանում են, գարունը մոտենում է, հրաժեշտ ենք տալիս ձմռանը: Շուտով ծառերի ճյուղերին բողբոջներ կհայտնվեն, տեղ-տեղ ծլել է խոտը:

Ծաղկազարդ — Ծառզարդար

Ազգային մշակույթի փոխանցման և պահպանման ձևերի մեջ կարևոր դեր ունեն ծեսերը: Նախակրթարանի սաների համար Զատկի և Ծաղկազարդի (Ծառզարդար) ծեսերը կրկնակի ուրախ տոներ են:

Ծաղկազարդը բնության զարթոնքի, երկրագործի գարնանային աշխատանքների շրջան է: Ու մենք՝ փոքրիկ երկրագործներս, Ծաղկազարդի ծեսի նախապատրաստական աշխատանքները սկսեցինք ածիկացանով: Նախ, պարզեցինք, որ բույսերը բազմանում են սերմի միջոցով: Նրանք ունեն արմատներ, որոնցով ամրանում են հողին: Հողն էլ նրանց «կերակրում է», ու երբ հողը ջրվում է, այդ ջրով բույսերի ծարավն է հագեցնում: Պարզեցինք, որ բնությունը բույսերին ջրում է անձրևների միջոցով: Անձրևներն էլ, մարդկանց նման, լինում են տարբեր՝ ուրախ, տխուր, չարաճճի, անկարգ… Իսկ երբ անձրև չի գալիս, մենք ենք ջրում ծարավ բույսերին, որովհետև առանց ջրի կչորանան ու էլ չեն աճի: Պարզեցինք նաև, որ հողը ժամանակ առ ժամանակ պետք է փխրեցնել, հետևել, որ ոչ ոք չվնասի ծիլերը: Այսպես մենք իմացանք, որ բնության նկատմանբ միշտ պետք է հոգատար լինել, ավելորդ ծաղիկ չքաղել, ծառի ճյուղերը չկոտրել, խոտերը չտրորել: Ծաղկազարդի երկրագործի

գործընթացը սաների մեջ նաև սերմանեց սեր դեպի բնությունը, նրա նկատմամբ հոգատարություն, ուշադիր վերաբերմունք:

Զրույց ծառի հետ. սաները պետք է պատկերացնեն, որ ծառի իրենց լսում է և փորձեն համոզել նրան, որ արթնանա, կանաչի ու ծաղկի, ինչպես իրեն շրջապատող ծառերը: Բնականաբար, զարմանում ու կաշկանդվում են, բայց, իրենց միտքը կա

Պատրաստեցինք Ծաղկազարդի ծիսական պարագա՝ կարկաչա, սովորեցինք և երգեցինք ծիսական «Կարկաչա» երգը: Այցելեցինք մեր կողքի խումբ, երգեցինք «Կարկաչա»-ն և ստացանք ձվեր, քաղցրավենիք, չամիչ և այլ համով ուտեստներ:

Զատիկ

Զատկական ծեսի նախօրեին ձուփչոցի խաղացինք: Ձուփչոցին վերածեցինք նաև ընտանեկան նախագծի, որտեղ մեր սաները իրենց ընտանիքներում էլ խաղացին: Այնուհետև դատարկ ձվերը ներկեցինք և դրանցով զարդարեցինք մեր պարտեզի ծառերը: Ծառերի ճյուղերին կախեցինք հերթով, յուրաքանչյուրն իր պատրաստած ձուն տալիս էր դաստիարակին, որն էլ կախում էր սանի ընտրած ճյուղին:

Զատիկի ծեսը ընտանիքում նշելուց հետո նշեցինք նաև նախակրթարանում, որտեղ բոլոր խմբերով միասնական ծիսական օր ունեցանք, որի ժամանակ է՛լ ծիսական երգեր, է՛լ ծիսական խոհանոց, է՛լ ասիկներ, է՛լ խաղիկներ խաղացինք: Խաղացինք նաև Զատկին բնորոշ ծիսական խաղեր, որոնցից են ձվախաղերը: Սաները խաղում էին մեծ ոգևորությամբ: Մասնակցելով ծեսին, սաները, երգելով, պարելով, խաղալով, ծիսական ուտելիք պատրաստելով, ընկալում և ճանաչում են, սովորում ու նոր հմտություններ են ձեռք բերում:

Ծիսական այս գործողությունը խաղով իրականացնելով, հիմնականում աղում և չիք ենք անում այն ամենը, ինչը կուզենայինք, որ չլիներ: Եվ, պատահական չէ, որ սաները

նշում են ծառի ճյուղի կոտրելը, քարով խփելը, մաքուր ջուրը կեղտոտելը, խոտը պոկելը, ծառ կտրելը, բնությունը կեղտոտելը, անուշադրությունը, բույսերը պոկելը, բույսերը փչացնելը, արմատները փորելը, տերև պոկելը, ծաղիկ պոկելը, և այլն: Հետաքրքիրն այն է, որ այս խաղը խաղացողի ուշադրությունն անկախ իրենից ուղղորդում է դեպի այն նեգատիվը, որը խանգարում է: Խաղից հետո երեխաները շարունակում են աղալ ու չիք անել անցանկալին, մանավանդ, երբ իրենց ուշադրությունը բևեռվում է բնության, նրան հասցրած վնասներին:

Ծաղկազարդի, Զատիկի ծեսերն ամփոփվեցին ուրախ երաժշտածիսական ներկայացմամբ, որտեղ մեծն ու փոքրը ընտանեկան միջավայրում զգալով, անկեղծ խաղացին իրենց պատկերացրած ծեսը:

Գլուխ2. Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում

Նախակրթարանում երեխայի ներդաշնակ հոգևոր զարգացման կարևոր խնդիրներից մեկը ազգային մշակույթի յուրացումն է՝ ծեսեր, տոներ: Խնդրի իրագործման համար սաները.

- սովորում են ծիսական և ծեսին համապատասխան երգեր, ասույթներ, ասիկներ, օրհնանքներ,
- նկարում են

ա. ծիսական հերոսներին,
բ. ծիսական պարագաներ,

- պատրաստում են ծիսական պարագաներ դաստիարակի, ծնողի օգնությամբ,
- խաղարկում են ծիսական գործողություններ, ծիսական խաղեր,
- բեմականացնում են երգեր,
- կատարում են բնագիտական փորձեր,
- գնում են ուսումնական ճամփորդության,
- հորինում են հանելուկներ, հեքիաթներ, գովք, օրհնանք,
- վերապատմում, փոխադրում են իրենց տպավորությունները:

Սանը, քայլ առ քայլ, անկաշկանդ միջավայրում, ամենօրյա արդյունավետ գործունեությամբ, լիիրավ մասնակցությամբ, կարողություններ և հմտություններ ձեռք բերելով՝ յուրացնում է ծեսը:

Ի՞նչ խնդիրներ են լուծվում.

- նյութի յուրացում
- կարողությունների դրսևորում,
- խոսքի զարգացում,
- բնության մասին նախնական գիտելիքների փոխանցում

- բնության նկատմամբ հոգատար, խնայողական վերաբերմունքի ձևավորում
- տարբեր կարողությունների դրսևորում, հղկում, մի շարք հմտությունների ձեռքբերում, մշակում (լեզվական, թատերական),
- գրական — գեղարվեստական ճաշակի զարգացում,
- ինքնադրսևորում, ձերբազատում բարդույթներից:

Այս աշխատանքները նպաստում են.

- երեխայի բառապաշարի հարստացմանը,
- տրամաբանական մտածողության ձևավորմանը,
- ստեղծագործական երևակայության զարգացմանը,
- ինքնուրույն աշխատելու ունակության ձևավորմանը,
- բավարարվում է նրա ինքնահաստատման – ինքնադրսևորման պահանջը,
- ձեռք է բերվում խմբով աշխատելու, ինքնակազմակերպման հմտություններ,
- զարգանում է գեղարվեստական ճաշակը (նկարչություն, ձեռարվեստ, երաժշտություն և այլն),
- իրականացվում է էկոլոգիական դաստիարակությունը
- ավելի մոտիկից ճանաչելու իրենց դաստիարակներին, տատիկներին, պապիկներին, ծնողներին, հարազատներին:

Արդյունքում սանը կիմանա

- ազգային ծեսը,
- ազգային սովորույթները,
- հայկական ժողովրդական և ծիսական երգերը,
- ծիսական կերպարները,
- ժողովրդական, մանկական, ծիսական խաղերը,

- ծիսական կերակրատեսակները,
- ծիսական պարագաները:

Սանը կկարողանա

- երգել հայկական ժողովրդական և ծիսական երգեր,
- պատրաստել ծիսական պարագաներ,
- խաղալ ժողովրդական, մանկական, ծիսական խաղեր:

Սանը կլինի

- ծեսը իմացող ակտիվ մասնակից, փոխանցող, տարածող:

Ծեսն այն միջավայրն է, որտեղ սովորողները ծեսի նախապատրաստական և իրականացման ընթացքում կիրառում են իրենց կարողությունները, հմտությունները, գիտելիքները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ավարտական հետազոտական աշխատանքի աշխատանքի, տեսական գրականության ուսումնասիրության և վերլուծության ն արդյունքում եկա մի շարք եզրահանգումների.

- Երեխայի զարգացմանը, ինչպես նաև նրա անձնավորության ձևավորմանը նպաստող խթանները պայմանականորեն միավորում են երեք խմբի՝ կենսաբանական, սոցիալական և մանկավարժական:
- Մանկավարժական գործոնների շարքին է պատկանում երեխայի ինքնուրույն գործունեությունը, որը խրախուսվում և ձևավորվում է մեծահասակների մանկավարժական ներգործության շնորհիվ: Ինքնուրույնության դրսևորումները խթանում են երեխայի զարգացման գործընթացը, նպաստում նոր հաջողությունների ու նվաճումների: Երեխայի ինքնուրույնության արգելակումը մեծահասակների կողմից բացասաբար է անդրադառնում և խոչընդոտում է նրա ընդհանուր զարգացման գործընթացը: Երեխայի ինքնուրույնությունը՝ նրա զարգացման և անձնավորության ձևավորման կարևորագույն գործոն է:

Ազգային տոները, ծեսերը և ծիսակարգերը բավականին շատ նյութ են պարունակում մարդ-բնություն կապի ու հարաբերությունների մասին: Հատկապես բնության զարթոնքին առնչվող ծեսերը լայն հնարավորություններ են տալիս երեխաների մեջ բնագիտական նախնական գիտելիքներ, բնության նկատմամբ պատշաճ վերաբերմունք ձևավորելու և էկոլոգիական դաստիարակության համար:

Ազգային տոներին, ծեսերին մասնակցելու արդյունքում երեխան առնչվում է ազգային երգ ու պարին, սովորույթներին, մշակույթին, ձեռք է բերում նոր գիտելիքներ ու փորձ:

Երեխան ծանոթանում է բնության հետ, սովորում խնամքի կանոնները, հասկանում բնության կարևորությունը իր կյանքում, գիտակցում բնության նկատմամբ հոգատար լինելու իր պարտականությունները:

Երեխան հասկանում է սեփական անձի դերն ու պարտավորությունները ոչ միայն բնության խնամքի ու պահպանման, այլ նաև այն չփչացնելու, չաղտոտելու և ուրիշներին էլ դա ցույց տալու գործում:

Երեխաները սովորում են օգտվել բնության բարիքներից՝ չվնասելով այն:

Բնության մասին զրույցները, երգերը, հեքիաթները երեխայի մեջ առաջացնում են հետաքրքրություն բնության հանդեպ:

Տեսածն ու լսածը, փորձածը նկարելը, այդ մասին պատմելն ու զրուցելը ավելի են ամրապնդում երեխայի գիտելիքներն ու վերաբերմունքը:

Երեխան հասկանում է բնության կարևորությունը, բնության ու մարդու փոխկապվածությունը, երեխայի մեջ արթնանում է հետաքրքրություն, պատասխանատվություն և հոգատարություն դեպի բնությունը:

Ներկայացված նյութն առաջարկում ենք կիրառել նախակրթարաններում, ընտանիքում, այլ մանկական հաստատություններում: Այն ոչ միայն երեխաների, այլև բոլորի համար ազգային մշակույթի յուրացման արդյունավետ նյութ է, ծրագրում ներառելով ազգային ծեսը՝ ծիսական երգերով, խաղերգերով, ծիսական միջավայրով, ճիշտ ուղղությամբ կուղղորդվի սանի ոչ միայն երաժշտական կրթությունը, այլև զարգացումը:

Գրականության ցանկ

Ազգային ծեսեր, տոներ. նկարագրություն

Վ. Բդոյան, «Հայ ժողովրդական խաղեր»

Հրանուշ Խառատյան -Առաքելյան, «Հայ ժողովրդական տոները»

Զատիկ — Ռ. Հարոյան

Ծեսը՝ ինքնագիտակցության միջոց

Ազգային ծեսերին, խաղերին՝ նոր կյանք

Խաղը ծիսական միջավայրում ,

Սուրբ Ծննդյան ավետիսներ, ամանորյա խաղեր